

«2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹ

V ՓՈՒԼ

«Գործք» ամսագիրը շարունակում է «2015 թվականի Հայաստանի Հանրապետության լավագույն հաշվապահի» անվանակարգում հայտարարված մրցույթը:

Մրցույթի հինգերորդ փուլի մասնակիցներին առաջարկվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցերից, որոնք բաղկացած են ճշմարտանման հարցերից և մեկ միանշանակ ճիշտ պատասխանից: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխան կգնահատվի 2 միավոր՝ սխալ պատասխան՝ 0: Հարցաշարի ընդհանուր միավորների թիվը կազմում է 20 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից, որը գնահատվում է 36 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների թիվը կազմում է 56 միավոր:

Մրցույթում ամենաբարձր միավորներ հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Ստորև ներկայացվող հարցաշարի պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2015թ. դեկտեմբերի 27-ը: Հարցաշարի ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2015թ. դեկտեմբերի 28-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Հաղթողի որոշման, նրան մեծարման, պատվոգիր և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2016թ. փետրվարին՝ Ծաղկաձորում

«2015Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼԻ

ՀԱՐՑԱՇԱՐԸ՝ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ

1. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված օտարերկրյա անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ով հարկվող գործարքներ իրականացնելիս՝

- ա) այդ գործարքների մասով ավելացված արժեքի հարկի գծով պարտավորություններ ընդհանրապես չեն առաջանում՝ օտարերկրյա անձը որպես ԱԱՀ վճարող չհամարվելու պատճառով,
- բ) օտարերկրյա անձը սահմանված ընդհանուր կարգով կրում է հարկային պարտավորություն,
- գ) օտարերկրյա անձանց փոխարեն օրենքով սահմանված կարգով հարկային պարտավորություններ են կրում պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող Հայաստանի Հանրապետության անձինք,
- դ) այդ գործարքների մասով հարկային պարտավորություններ առաջանում են ինչպես օտարերկրյա անձանց, այնպես էլ պայմանագրային հարաբերությունների կողմ Հայաստանի Հանրապետության անձանց մոտ:

2. Ավելացված արժեքի հարկով չեն հարկվում (հարկվող օբյեկտ չեն համարվում).

- ա) ծառայությունների անհատույց սպառումը,
- բ) հաշմանդամների, կամ արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակում առնվազն 50 տոկոս հաշմանդամ ունեցող իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կողմից պատրաստված ապրանքների մատակարարումը,
- գ) համատեղ ներդրումներով ձեռնարկությունների կողմից կանոնադրական կապիտալի համալրման նպատակով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սարքավորումները և արտադրական նշանակության տեխնիկան,
- դ) իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության օրենքով սահմանված կարգով վերակազմավորման գործարքները.
- ե) սույն կետի «բ» և «դ» ենթակետերում նշվածները:

3. Առևտրային կազմակերպության հարկվող շահույթը որոշելիս եկամուտների թվին են դասվում անհատույց ստացվող ակտիվները, եթե դրանք ստացվել են.

- ա) ցանկացած անձից,
- բ) միայն առևտրային կազմակերպություններից,
- գ) ցանկացած անձից, բացառությամբ ֆիզիկական անձանցից:

4. Գույքահարկով հարկվող օբյեկտ չեն հանդիսանում՝

- ա) այգետնակը (ամառանոցը),
- բ) բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանը
- գ) բազմաբնակարան բնակելի շենքը
- դ) կազմակերպության հիմնական միջոց հանդիսացող սարքավորումները:

5. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է՝

- ա) այդ ապրանքների ներմուծվող ծավալներից
- բ) այդ ապրանքների մաքսային արժեքից
- գ) այդ ապրանքների ներմուծվող ծավալներից և մաքսային արժեքից:

6. «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ներմուծման երկրում ապրանքների վրա կարող են կատարվել.

- 1)ապրանքների փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխբեռնման ծախսեր,
- 2)ապրանքների ապահովագրման ծախսեր,
- 3)կոմիսիոն ծախսեր,
- 4)միջնորդային (բրոքերային) ծախսեր:

Նշված ծախսերից, որոնք են ներառվում մաքսային արժեքի մեջ.

- ա) 1-ին և 2-րդ կետերում նշված ծախսերը
- բ) 3-րդ և 4-րդ կետերում նշված ծախսերը
- գ) 1-ին և 4-րդ կետերում նշված ծախսերը
- դ) 1, 2, 3, 4-րդ կետերում նշված բոլոր ծախսերը
- ե) ոչ մեկն էլ չի ներառվում:

7. Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով պետական գրանցում չստացած անձանց հետ կնքված պայմանագրերով և նրանց կողմից տրված հումքից հանրապետության տարածքում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար ակցիզային հարկի պարտավորությունը կրում են՝

- ա) Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով պետական գրանցում չստացած անձինք՝ պատվիրատուները
- բ) Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով պետական գրանցում ստացած՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող (պատրաստող, շալցնող) անձինք
- գ) պատվիրատուները՝ ստացված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների հետագայում իրացնելու ժամանակ
- դ) պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

8. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերի չափով.

- ա) ամբողջությամբ, ծախսերի կատարման հաշվետու ժամանակաշրջանում,
- բ) ոչ ավելի տվյալ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի 10%-ի չափով՝ միանվագ, իսկ դրանից ավելի՝ ամորտիզացիայի ձևով,
- գ) տվյալ հիմնական միջոցի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետից ելնելով:

9. Ավելացված արժեքի հարկի կիրառման առումով ապրանքները համարվում են մատակարարված Հայաստանի Հանրապետությունում, եթե՝

- ա) այդ ապրանքներն առաքվել կամ հանձնվել են գնորդներին Հայաստանի Հանրապետության տարածքում կամ արտահանվել են Հայաստանի Հանրապետությունից.
- բ) Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված անձի կողմից օտերերկրյա պետությունում ձեռք բերված ապրանքները այդ պետության տարածքում մատակարարվել են օտարերկրյա անձին,
- գ) ապրանքները օտարերկրյա պետություններից արտահանվել են Հայաստանի Հանրապետություն՝ նախքան Հայաստանի Հանրապետություն դրանց ներմուծման պահը,
- դ) «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված և ոչ մի գործարքի դեպքում ապրանքները Հայաստանի Հանրապետությունում մատակարարված չեն համարվում:

10. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է հանդիսանում

- ա) ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը,
- բ) ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը և դրանց համար գանձվող մաքսատուրքը,
- գ) ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը, դրանց համար գանձվող մաքսատուրքերը և մաքսային վճարները,
- դ) ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը, դրանց համար գանձվող ակցիզային հարկի գումարը և մաքսատուրքը.

- ե) ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը և դրանց համար գանձվող ակցիզային հարկի գումարը:

**«2015Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐՈՎԱՆ V ՓՈԽԻ
ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ**

Բետտա ՍՊԸ-ն, որը 2013թ. արդյունքներով ունեցել է 2000 հազ. դր. հարկային վնաս վերակազմավորվել է ՓԲԸ-ի: 2014թ. հանդիսանալով եռամսյականին ԱԱՀ վճարող իրականացրել է հետևյալ գործարքները

1 «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ՀՀ տարածք է ներմուծել ապրանքներ, որի պայմանագրային արժեքը, ներառյալ տրանսպորտային և այլ ծախսերը կազմել է 4400 հազ. դրամ: Մաքսային մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված մաքսային արժեքը կազմել է 7500 հազ. դրամ: Ներմուծված ապրանքների համար մաքսային մարմինների կողմից հաշվարկվել է մաքսատուրք 10% դրույքաչափով և մաքսավճար 100 հազ. դրամ: Ներմուծված բոլոր ապրանքները հարկվում են ԱԱՀ-ով, որը մաքսային մարմինների կողմից հաշվարկվել և գանձվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով (նշյալ ապրանքները ակցիզային հարկով չեն հարկվում):

2 Ներմուծված ապրանքի կեսը ընկերությունը վաճառել է դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, իսկ մյուս կեսը` ՀՀ տարածքում` այդ թվում, 30 տոկոսը ՀՀ կառավարության լիազորված մարմնի կողմից բարեգործական որակված ծրագրերի շրջանակներում մատակարարել է բարեգործական ծրագիր իրականացնող կազմակերպությանը, իսկ 70 տոկոսը` այլ առևտրային կազմակերպությունների: Ապրանքների վաճառքի գինը սահմանվել է 20 տոկոս առևտրային հավելագին ներմուծման պահի ինքնարժեքի վրա:

3 ՀՀ տարածքում հարկային հաշվով ձեռք է բերել 5000 հատ նկարչական ալբոմ, որի ձեռքբերման արժեքը կազմել է 200 հազ. դրամ առանց ԱԱՀ (ԱԱՀ-ի հետ միասին 240 հազ. դրամ): Միավորի վաճառքի մանրածախ գինը կազմել է 300 դրամ: Բոլոր ալբոմները վաճառվել են հաշվետու ժամանակաշրջանում :

4 Ստացել է շահաբաժին և անհատույց հողամաս` համապատասխանաբար 8000 հազ. և 11000 հազ. ՀՀ դրամի չափով:

5 Հաշվետու ժամանակաշրջանում կատարել է աշխատավարձի գծով ծախս` 3600 հազ. ՀՀ դրամի, այդ թվում 600 հազ. ՀՀ դրամը հաշվանդամների:

6 Փաստաթղթերով հիմնավորված այլ ծախսերը, այդ թվում ՀՄ-ի վրա կատարված ընթացիկ ծախսեր կազմել են 1800 հազ. ՀՀ դրամ

01.07.2014թ.-ին կատարել է կապիտալ ծախսումներ 2000 հազ. դրամի չափով 01.03.2010թ.

- 7 ձեռքբերված ծառայողական ավտոմեքենայի վրա, որի ձեռքբերման արժեքը կազմել է 5000 հազ. դրամ առանց ԱԱՀ և վճարել է 1000 հազ. դրամ ԱԱՀ:

Հաշվարկել հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով առաջացող շահութահարկը:

Խնդրի պատասխանը

Գնահատման միավոր	Ծախսեր			Եկամուտներ			Գնահատման միավոր
2	Վաճառքի ինքնարժեք	$(4400+750+100)/2$	2625	3150	$(4400+7500*10\%+100)/2*1.2$	Հասույթ դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկներից	3
3	Վաճառքի ինքնարժեք	$2625*0.3+((7500+750)*20\%/2*30\%)$	1035	945	$2625*0.3*1.2$	Հասույթ բարեգործական ընկերությունից	2
4	Վաճառքի ինքնարժեք	$2625*0.7+(1650/2*0.7-2205*0.2)$	1974	2205	$5250/2*0.7*1.2$	Հասույթ այլ կազմակերպություններից	2
2	Վաճառքի ինքնարժեք	200+40	240	1500	5000*300	Հասույթ ալբոմների վաճառքից	2
			-	11000		Անհատույց ստացված հող	2
1	Աշխատավարձ	Տրված է	3600				
3	Հաշվանդամների արտոնություն	600*150%	900				
1	Այլ ծախսեր	Տրված է	1800				
6	Մաշվածություն	$6000/60*6+(1400-600+200)/60*6$	880				
1	Ընդամենը		13054	18800			
1	Հարկվող	18800-13054		5746			

	շահույթ					
1	Շահութահարկ	5746*20%		1149,2		
25	Ընդամենը					11
						36